



«Այբ» կրթական հիմնադրամ  
Երևան 0009, Կոռյունի 19ա  
Հեռ.՝ +374 10 54 37 07, +374 98 54 37 07  
info@ayb.am  
www.foundation.ayb.am

## Մամուլի հաղորդագրություն

Երևան, 25 հոկտեմբերի, 2017

### Ավելի քան 38000 աշակերտ կմասնակցի «Մեղու. հայերենը բոլորի համար» մրցույթին

Վաղը «Մեղու. հայերենը բոլորի համար» մրցույթի օրն է: Այս տարի մրցույթին մասնակցելու համար գրանցվել է Հայաստանի և Արցախի 992 դպրոցի **ավելի քան 38000** աշակերտ: Մրցույթն անցկացվում է արդեն **չորրորդ** անգամ:

Հայերենի մրցույթի նպատակն է համընդհանուր հետաքրքրություն առաջացնել հայոց լեզու առարկայի հանդեպ, այն առավել գրավիչ ու սիրելի դարձնել երեխաների համար, նորովի մատուցել հայոց լեզուն՝ ցույց տալով նրա ողջ հմայքն ու գեղեցկությունը, և զարգացնել երեխաների լեզվամտածողական ու լեզվագիտական ունակությունները:

«Մեղու 2017»-ի առաջադրանքներն ու ճիշտ պատասխանները կիրապարակվեն [www.meghu.am](http://www.meghu.am) կայքում **նոյեմբերի 9-ին**:

Յուրաքանչյուր մասնակից դպրոց **հունվարին** ստանալու է ամփոփ հաշվետվություն իր աշակերտների արդյունքների մասին, իսկ **մայիսի վերջին** նախատեսվում են մրցանակաբաշխություններ Հայաստանի բոլոր մարզերում և Արցախում:

«Մեղու» մրցույթն անցկացվում է տարին մեկ անգամ անմիջապես բոլոր մասնակից դպրոցներում:

Մրցույթը թեստային է: Թեստերը կազմված են գլխավորապես հայոց լեզու առարկային վերաբերող հարցերից, սակայն կարող են ընդգրկել նաև գրականությունից այնպիսի հարցեր, որոնք ունեն լեզվամտածողական ու լեզվագիտական ուղղվածություն և չեն պահանջում գրական որոշակի գործի հմացություն: Յուրաքանչյուր թեստ ունի պատասխանի 5 տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Մրցույթի պաշտոնական կազմակերպիչն է [«Այբ» կրթական հիմնադրամը](http://www.foundation.ayb.am), որը 2009 թ.-ից Հայաստանում և 2010 թ.-ից նաև Արցախում մեծ հաջողությամբ կազմակերպում և անցկացնում է նմանատիպ «Կենզուրու» և «Ռուսական արջուկ» դպրոցական միջազգային մրցույթները:

Հայաստանում մրցույթի կազմակերպման գործընկերն է [«ՎՏԲ-Հայաստան քանկ» ՓԲԸ](http://www.vsf.am)-ն: Մրցույթի տեղեկատվական գործընկերն է «Մեդիամաքս» լրատվական գործակալությունը: